ամէն հին եկեղեցեաց վերայ կ'երևի, այժմ միայն դադրած է ոմանց եկեղեցեաց մէջ, Ռուսաստանի մի քանի քաղաքներուն, որ կամայականութիւն է, և ոչ ըստ ազգային արարողութեան։

Ս. ՀՐԵՇՏԱԿԱՊԵՏՔ

Այժմ Ս. Հրեշտակապետք համարուած է գլխաւոր կամ մայր եկեղեցի. որ Թէպէտ Ս. Սարգսի նման քաղաքիս կեդրոնական տեղին չինուած չէ, այլ որովհետև աւելի ընդարձակ է և կաթուղիկէիւ և բարձրաբերձ կամարներով յօրինուած, և վերջին քանի մի տասնեակ տարիներու մէջ կիսաւեր վիճակ ունէր Ս. Սարգիս, բնականաբար Ս. Հրեշտակապետաց անցած է մայր եկեղեցի լինելու պատիւը, որ հնութեամբ շատ հին չէնք մը չէ, ինչպէս կը վկայէ քարաքանդակ արձանագրութիւնն։

Շինուած է եկեղեցիս հաչալ արդեամբք Աստուածատրոյ ուրումն և նորա ընտանեաց ի ՊԾԷ (1408), Կաֆայի արևմտեան կողմը բարձր դիրքի վերայ դրսի կողմէն բոլորովին անսյսճոյճ. ունի հայկական կաթուղիկէ ոսկեզօծ խաչիւ պսակուած, այլ խաչին ձեւը ազգային չէ. և համեմատութեամբ կաթուղիկէն խոշոր է, կը յիշեցնէ տիրող ազգային ճաչակը, մինչ մի փոքրաձև խաչ թերևս աւելի համեմատ և վայելուչ կը լինէր ի ծայր կաթուղիկէին Հրեշտակապետաց։ Եկեղեցւոյն ներսի կողմը վայելուչ է և գեղեցիկ, բարձրաբերձ և համեմատաչափ կամարներով, որոց վերայ կը հանգչի կաթուղիկէն։ Վայելչագեղ են և բոլորովին հայկական խորանները, բեմը և դասը. ժողովրդոց կամ կանանց կողմի դաստ չինուած է ցած երդիքով,